ՀԱՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԵՐՆՋԱՏԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

Մշակվել է համայնքի ղեկավարին կից գործող «Երնջատափ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի » կողմից
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Հրաչյա Սահրադյանի կողմից
Հաստատվել է՝համայնքի ավագանու **23.01.2017թ.**թիվ **5** որոշմամբ

ԵՐՆՋԱՏԱՓ 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆ ԻԽՈՍՔ.....
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....
4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Արագածոտնի մարզի Երնջատափ համայնքի 2017-2021թթ. Զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-նմշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Արագածոտնի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Երնջատափ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքը զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վեր հանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և Երնջատափ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 22-ի N 10 որոշման 2-րդ հավելվածով ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող «Երնջատափ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021 թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված են Երնջատափ համայնքի համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակմա նկամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶՀԾ-ն ներառում է նաև Երնջատափ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Երնջատափ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Երնջատափ համայնքի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՋՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երնջատափ գյուղը հիմնադրվել է 1828-1829 թթ. Արեւմտյան Հայաստանից՝ հիմնականում Մուշից, Դիադնից, Խլաթից և Վանից եկած գաղթականների կողմից եւ ունեցել է Գարապուլագ, Երինճատափ, Ղարաբուլաղ (ղարա բուլաղ- սև աղբյուր) անվանումները: Երնջատափ է վերանվանվել 1946 թ-ին: Հեռավորությունը Երևանից 37(Եղվարդով) և 47 (Աշտարակով) կմ է, մարզկենտրոնից՝ 28 կմ, Ապարան քաղաքից՝ 23 կմ: Գյուղում բազմաթիվ են պատմամշակութային կառույցները. գյուղում է գտնվում Սբ. Նշան կամ Ս. Աստվածածին եկեղեցին (12-13-րդ դդ.): Երնջատափից 1 կմ հյուսիս-արևմուտք գտնվում է «Երնջակ» ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.), 2,5 կմ արևմուտք՝ «Դավոյի» գյուղատեղին (10-14-րդ դդ.), 3 կմ արևմուտք՝ «Լազգի աղբյուր» գյուղատեղին (10-15-րդ դդ.), իսկ 2 կմ արևմուտք՝ «Աստվածընկալ» վանքը (5-13-րդ դդ.): Գյուղը տեղադրված է Արայի լեռան հյուսիսարեւելյան ստորոտում: Գտնվում է ծովի մակարդակից 1850 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են: Կլիմայի ցամաքայնության հետեւանքով հողահանդակները ոռոգվում են եւ օգտվում են Երնջատափի ջրհան կայանից, որը ջուրը Ապարանի ջրամբարից տեղափոխում է այստեղ:
Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ, խոշոր եւ մանր եղջերավոր կենդանիների անասնաբուծությամբ: Արդյունաբերություն չունի:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը : Համայնքի վարչական տարածքը կազմում է 3122,3 հա:
Երնջատափ համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմումէ 653 մարդ (աղյուսակ1):

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները(01.10.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	**653**
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	**165**

2.1	այդթվում՝ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	0
2.2	Կիսակառույց տներում բնակվող	2
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	20

Համայնքի բնակչության 48.6 % կազմում են տղամարդիկ և 51.4% կանայք: Համայնքի բնակչության տարիքային ևսոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ2.
Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդթվում՝	653	335	318
	մինչև 1 տարեկան	4	3	1
	1-2 տարեկան	10	4	6
	3-4 տարեկան	14	7	7
	5-6 տարեկան	15	3	12
	7-10 տարեկան	23	10	13
	11-14 տարեկան	20	12	8
	15-17 տարեկան	8	5	3
	18 և ավելի տարեկան	559	291	268
2.	Կենսաթոշակառուներ(ներառյալ հաշմանդամներ)այդ թվում՝	86	48	38
	Տարիքային և աշխատանքային	76	43	33
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	6	3	3
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0	0	0
5.	Հաշմանդամ երեխաներ	1	0	1
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	5	3	2
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0		
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	0		
9.	Հաշմանդամներ	10	5	5
10.	Զբաղվածներ	240	105	135
11.	Գործազուրկներ	40	28	12
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	20	10	10
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	0		

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Երնջատափ համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 21-ի N 3 որոշմամբ հաստատված 2015 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **14936.8** հազար դրամ, ծախսերի գծով՝ **14136.8** հազար դրամ: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **30.3 %՝ 4529.0** հազար դրամ:

Համայնքում նախկինում եղել է արդյունաբերական գործարան, որտեղ արտադրվել է պոլիեթիլեն: Այժմ այդ արտադրությունը չի գործում:

Համայնքի տարածքում գործում է առևտրի 2 կետ, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Նրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև տարեկան կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջեին՝ գործունեության թույլտվության համար: Առևտրի այդ կետերը հիմնականում տեղակայված են առևտրով զբաղվողների բնակելի առանձնատներում, բացառությամբ մեկի, որը գտնվում է առանձին վայրում:

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 509, այդ թվում կով՝ 238, իսկ մանր եղջերավոր անասունների քանակը՝ 266, այդ թվում ոչխար՝ 258, այծ՝ 8: Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ, առավելապես՝ հավեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար: Համայնքի մի քանի տնային տնտեսություններ հաջողությամբ զբաղվում են նաև մեղվապահությամբ:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում աճեցնում են նաև կարտոֆիլ, բանջարաբոստանային կուլտուրաներ՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար, իսկ վաճառքի համար գյուղմթերքի հիմնական սպառման շուկան Երևանն է:

Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում, քանի որ մայրաքաղաք հասնելու համար համայնքը չունի հասարակական տրանսպորտ:

Երնջատափ համայնքում առկա են բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ, ինչը, ներդրումային ծրագրերի առկայության դեպքում, կնպաստի համայնքում զբոսաշրջության զարգացմանը և հանգստի գոտիների ստեղծմանը:

Համայնքում գործում են միջնակարգ կրթության մեկ հաստատություն՝ մեկ մասնաշենքով:

- ✓ Դպրոցը ապահովված է ջեռուցման անհատական համակարգով: Դպրոցում գործում է ,,Պատանի երկրապահի,, խմբակ:

Համայնքում գործում Է նախադպրոցական կրթության մեկ հաստատություն՝ նախակրթարան, որը գործում է դպրոցի շենքում: Նախակրթարանն ապահովված է գույքով, երեխաներին անհրաժեշտ պարագաներով, խաղալիքներով:

Նախակրթարան հաճախում են 8 երեխաներ. այն ունի 1 աշխատող: Համայնքում կա մանկապարտեզի առանձին շենք, որն ունի վերանորոգման կարիք:

Աղյուսակ 3. Երնջատափ համայնքի հանրակրթական դպրոցների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ ցուցանիշներ

Հ/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1.	«Երնջատափի Ե. Չարենցի անվան միջն դպրոց» ՊՈԱԿ	18	60
2.	Երնջատափ համայնքի նախակրթարան	1	8

Համայնքը ունի 1 բուժկետ, որը գործում է համայնքապետարանի շենքում. Այն ունի 1 աշխատող:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքի տարածքում 2009 թ-ից թվականից պետական ներդրումների հաշվին սկսվել և շարունակվում են «Աստվածընկալ» եկեղեցու վերակառուցման աշխատանքները:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի ֆինանսական իրավիճակը վերլուծելիս պետք է հստակ տարանջատել՝

- *Համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),*
- *Ծրագրերի իրականացման համար համայնքներին հասանելի այլ միջոցներ (աղբյուրներ և ծախսային ուղղություններ):*

Ֆինանսական կանխատեսումները պետք է արվեն 5 տարվա կտրվածքով և համեմատվեն ելակետային տարվա հետ (ՀՀՀԶԾ կազմման տարվան նախորդող տարվա փաստացի և տվյալ տարվա կանխատեսվողար ժեքներ): Հստակ պետք է բացահայտել, թե ինչի հիման վրա են արվել կանխատեսումները:
Հնարավորինս կիրառել տեքստային և աղյուսակային ներկայացում:

Խոշորացված համայնքների դեպքում եկամուտներն ու ուղղակի ծախսերը ներկայացնել ըստ բնակավայրերի:
Ծավալի նկատմամբ սահմանափակում չկա, սակայն պետք է հիշել, որ համայնքի բյուջեն առանձին փաստաթուղթ է և կարիք չկա այն նույնությամբ ներառելու ՀՀՀԶԾ մեջ:

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվումեն սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2016թ.՝ 81.3%, 2017թ.՝ 74.1%, 2018թ.՝ 75.7%, 2019թ.՝ 74.4%, 2020թ.՝ 76.5%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը
հազար դրամ

Հ/h	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. փաստացի 01.10.2016	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	**4304.4**	**4139.3**	**4163.5**	**4250.0**	**4285.0**	**4355.0**	**4425.0**
I.	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)***	**4059.0**	**4175.5**	**4163.0**	**4255.0**	**4283.0**	**4352.0**	**4419.0**
1	**ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ**	**4059.0**	**4175.5**	**4163.0**	**4255.0**	**4283.0**	**4352.0**	**4419.0**
1.1	**Գույքային հարկեր անշարժ գույքից**	**3301.0**	**3328.0**	**3328.0**	**3375.0**	**3373.0**	**3412.0**	**3449.0**
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	88.0	78.0	78.0	88.0	88.0	88.0	88.0
	Հողի հարկ	3213.0	3250.0	3250.0	3287.0	3287.0	3324.0	3361.0
1.2	**Գույքային հարկեր այլ գույքից**	**683.0**	**785.0**	**785.0**	**825.0**	**850.0**	**875.0**	**900.0**
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	**683.0**	**785.0**	**785.0**	**825.0**	**850.0**	**875.0**	**900.0**
1.3	**Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**
	Տեղական տուրքեր	75.0	62.5	50.0	50.0	60.0	65.0	70.0
1.4	**Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ**							

	Պետական տուրքեր							
1.5	**Այլ հարկային եկամուտներ**							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	**10407.8**	**10407.8**	**10407.8**	**10682.8**	**10957.8**	**11232.8**	**11507.8**
2.1	**Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**							
2.2	**Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**							
2.3	**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**	**10407.8**	**10407.8**	**10407.8**	**10682.8**	**10957.8**	**11232.8**	**11507.8**
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	9562.3	9564.5	9564.5	9814.5	10064.5	10314.5	10564.5
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	845.5	843.3	843.3	868.3	983.3	918.3	943.3
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	**Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման							

	նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	**ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ***							
3.1	**Տոկոսներ**							
3.2	**Շահաբաժիններ**							
3.3	**Գույքի վարձակալությունից եկամուտներ**							
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	450.0	450.0	450.0	460.0	465.0	470.0	475.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր							
3.4	**Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,** այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	**Վարչական գանձումներ**	**0**	**115.89**	**100.0**	**100.0**	**115.0**	**120.0**	**125.0**
	Տեղական վճարներ							
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի,	0	115.89	100.0	100.0	115.0	120.0	125.0

	շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	**Մուտքեր տույժերից, տուգանքներից**	**215.0**	**120.2**	**200.0**	**220.0**	**240.0**	**255.0**	**275.0**
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	215.0	120.2	200.0	220.0	240.0	255.0	275.0
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	**Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**							
3.8	**Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**							
3.9	**Այլ եկամուտներ***							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	800.0	800.0	800.0	850.0	900.0	950.0	1000.0
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ							
II.	**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)**	**3250.3**	**4368.4**	**4368.4**	**4000.0**	**0**	**0**	**0**
1	**Հիմնական միջոցների իրացումից մուտքեր**							

	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	3250.3	4368.4	4368.4	4000.0	0	0	0
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	**Պաշարների իրացումից մուտքեր**							
3	**Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր**							
4	**Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր**							
	Հողի իրացումից մուտքեր							
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)**							
Ա.	**ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)**							
1	**ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**							
1.1	**Արժեթղթեր**							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	**Վարկեր**							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	**Փոխատվություններ**							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
2	**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ**							
2.1	**Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն**							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի							

	մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	**Փոխատվություններ**							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	**Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը**	2450.3	3568.5	5000.0	3500.0	4000.0	3500.0	4000.0
2.4	**Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս**							
2.5	**Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս**							
2.6	**Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում**	2032.8	1533.8					
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը							
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ							
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							

1.1	**Արժեթղթեր**							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	**Վարկեր**							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	**Փոխատվություններ**							
	-փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

*)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն (եկամուտների և ծախսերի կանխատեսումը)

Եկամտի և ծախսի տեսակը	**2015թ. տարեկան**	**2017թ. կանխ.**	***2015թ փաստ.նկատ. %***	**2018թ. կանխ.**	***2015թ փաստ.նկատ. %***	**2019թ. կանխ.**	***2015թ փաստ.նկատ. %***	**2020թ. կանխ.**	***2015թ փաստ.նկատ. %***	**2021թ. կանխ.**	***2015թ փաստ.նկատ. %***
Ընդամենը եկամուտներ	13533.4	**13662.0**	**100.9**	**13981.5**	**103.3**	**14261.5**	**105.3**	**14578.5**	**107.7**	**14895.5**	110
Հարկային եկամուտներ, որից	3971.0	4097.5	103.1	4167.0	104.9	4197.0	105.6	4264.0	107.3	4331.0	109
Հողհիարկ	3213.0	3250.0	101	3287.0	102.3	3287.0	102.3	3324.0	103.4	3361.0	104.6
Գույքահարկ	683.0	785.0	114.9	825.0	120.7	850.0	124.4	875.0	128.1	800.0	131.7
Տեղական տուրքեր	75.0	62.5	83.3	55.0	73.3	60.0	80	65.0	86.6	70.0	93.3
Պաշտոնական ընթացիկ դրամաշն.	9562.3	**9564.5**	100.02	**9814.5**	**102.6**	**10064.5**	**105.2**	**10314.5**	107.8	10564.5	110.4
Այլ եկամուտներ											
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր											
Տարեսկզբի ազատ մնացորդ	2450.3	3568.5	145.6	**5000.0**	**204**	**3500.0**	**142**	3500.0	142	4000.0	163.2
Ընդամենը	14136.8	**15053.3**	106.4	**1550.3**	**109.6**	**15600.0**	**110.3**	16250.0	114.9	16500.0	116.7
Ընդամենը ծախսեր	14136.8	**15053.3**	106.4	**1550.3**	**109.6**	**15600.0**	**110.3**	16250.0	114.9	16500.0	116.7

Ընթացիկ ծախսեր, այդ թվում	11079.9	10888.0	98.2	11200.0	100.1	13079.9	118	140799.9	127	15079.9	136.1
Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ	8667.9	8971.3	103.5	9000.0	103.8	9300.0	107.2	9500.0	109.5	9700.0	111.9
Ապրանքն. Գնման և ծառ. վճ. ծախս											
Սուբսիդիաներ	845.5	843.3	99.7	843.3	99.7	868.3	102.6	893.3	105.6	918.3	108.6
Դրամա-շնորհներ											
Սոցիալական նպաստներ	800.0	800.0	100	850.0	106.2	850.0	106.2	900.0	112.5	900	112.5
Այլ ծախսեր											
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում											
Հիմնական միջոցներ											

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
2. Համայնքի բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը,
3. Ոռոգման ցանցի վերակառուցում
4. Համայնքը սպասարկող երթուղայինի առկայություն
5. Բազմաբնակարան շենքերի կոյուղու կապիտալ վերանորոգումը

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտների հետ: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը լուծելու համար:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ,
- ✓ Հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը՝ այն կարելի է դարձնել հանգստի և առողջարանային գոտի,
- ✓ Համայնքը հարուստ է արոտավայրերով, ինչը բարենպաստ է անասնապահության համար,
- ✓ Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը, պատմամշակութային հուշարձանները
- ✓ Համայնքի կենտրոնի նորակառույց շենքը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Ոռոգման ջրի ներհամայնքային համակարգերի վատ վիճակը,
- ✓ Գործազրկության առկայությունը և արտագնա աշխատանքի մեկնողների մեծ քանակը,
- ✓ Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- ✓ Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի ոչ բավարար վիճակը
- ✓ Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը
- ✓ Համայնքի մանկապարտեզի, գրադարանի և դպրոցի շենքերում ջեռուցման համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում
- ✓ Համայնքում աղբահանության կազմակերպման դժվարությունները
- ✓ Ոռոգման ներհամայնքային համակարգի բացակայությունը
- ✓ Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային կենտրոնի և Երևան քաղաքի հետ
- ✓ Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը
- ✓ Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Մեծ քանակի և որակի աշխատուժի առկայությունը,
- ✓ Արտադրական տարածքների առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Գործազրկության մակարդակի աճը,
- ✓ Բնական աղետները

- ✓ Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- ✓ Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը, մասնավորապես՝ մանկապարտեզի և միջնակարգ դպրոցի հետագա լիարժեք գործունեությունը

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Երնջատափ համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարայի նտարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և, հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը, համայնքը դարձնել հանգստի գոտի, մաքուր, բարեկարգ, կանաչապատ ևգրավիչ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	20.3%	19%	18%	17%	16%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	9.5%	-19.6%	-2.2%	-2%	-1.3%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	1%	1.5%	1.7%	2%	2.5%

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- ✓ Համայնքի մշակույթի տան գույքի ձեռք բերում և մշակութային կյանքի աշխուժացում,
- ✓ Բազմաբնակարան շենքերի կոյուղու կապիտալ վերանորոգումը,
- ✓ Համայնքի փողոցների բարեկարգումը,
- ✓ Ոռոգման ցանցի վերակառուցումը,
- ✓ Գիշերային լուսավորության աշխատանքների ավարտ:
- ✓ Գերեզմանների պարսպապատման աշխատանքների ավարտ:
- ✓ Համայնքը սպասարկող երթուղայինի ձեռք բերում:

Աղյուսակ 6. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների և հիմնական նպատակների կանխատեսվող արժեքներ (2017-2021թ.թ.)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	2017	2018	2019	2020	2021
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ					
1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	20.3%	19%	18%	17%	16%
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	9.5%	-5.8%	-2.7%	-2%	-1.3%
3.Համայնքում գրանցված բնակիչների թվի					

փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով					
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ					
1.Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ					
1.1. Համայնքի մշակույթի տան գույքի ձեռք բերում և մշակութային կյանքի աշխուժացում	*10%*	*11%*	*13%*	*14%*	*15%*
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը					
2.2. Համայնքի փողոցների բարեկարգում	*20%*	*25%*	*30%*	*40%*	*50%*
2.3. Գերեզմանների պարսպապատման աշխատանքների ավարտ					*80%*
2.4. Ոռոգման ցանցի վերակառուցում					*80%*
2.5. Գիշերային լուսավորության աշխատանքների ավարտ:	*50%*	*60%*	*70%*	*90%*	*100%*
2.6.Համայնքը սպասարկող երթուղայինի առկայություն	*0%*	*10%*	*20%*	*30%*	*40%*

3.Համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպում, համայնքի սեփականություն համարվող բնակելի տների, շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպումը, դրանց նորոգումը					
3.6. Բազմաբնակարան շենքերի կոյուղու կապիտալ վերանորոգումը	*0%*	*10%*	*20%*	*30%*	*50%*

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N1

« Համայնքի մշակույթի տան գույքի ձեռք բերում և մշակութային կյանքի աշխուժացում »
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ակտիվ մշակութային կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ</td></tr>
<tr><td rowspan="3">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>Առկա չէ</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Համայնքի մշակույթի տան համար գույքի ձեռքբերում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>Առկա չէ</td><td></td><td></td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.Մշակույթի տան դահլիճի (հանդիսությունների սրահ) համար սպասքի ձեռքբերում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Համայնքի մշակույթի տան համար գույքի ձեռքբերում
1.2.Մշակույթի տան դահլիճի (հանդիսությունների սրահ) համար սպասքի ձեռքբերում

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1. Մշակութային միջոցառումների կազմակերպաում
2.2. Ակտիվ մշակութային կյանքի կազմակերպաում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝
Կապիտալ ծախսեր՝5.000.000
Ընդհանուր բյուջեն՝ 5.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Սեփական եկամուտների հավաքագրում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Ֆինանսների բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ, հյուրեր</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2019</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքի մշակույթի տան դահլիճը համայնքի բնակիչների համար օգտագործվում է որպես հանդիսությունների, սգո արարողությունների սրահ, ուստի նախատեսվում է ձեռք բերել սեղաններ, աթոռներ, սպասք, ինչի արդյունքում կապահովվի համայնքի բնակչության հարմարավետությունը հանդիսություններ կազմակերպելիս:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն 2

« Բազմաբնակարան շենքերի կոյուղու կապիտալ վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Համայնքի կառուցապատում, բարեկարգում**						
Ծրագրի անմիջական նպատակ	Վերանորոգել բազմաբնակարան շենքերի կոյուղագծերը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ	Առկա է	Առկա է			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Հին խողովակները փոխարինել նորերով						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			0.5	0.5			
	2. Կեղտահորի կառուցում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ	Առկա է	Առկա է			
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Հին խողովակների փոխարինում նորերով 1.2. Կեղտահորի կառուցում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Կոյուղագծերի անխափան աշխատանքի ապահովում 2.2.Բազմաբնակարան շենքերի կոյուղու անխափան շահագործում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝5.000.000 Կապիտալ ծախսեր՝50.000.000 Ընդհանուր բյուջեն՝ 55.000.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Պետական միջոցների աջակցություն, սեփական եկամուտների հավաքագրում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բազմաբնակարան շենքերի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018						
Ծրագրի համառոտ նկարագրություն	**Երկարամյա շահագործման արդյունքում** համայնքի բազմաբնակարան շենքերի կոյուղագծերը վթարվել են, մաշվել, ուստի հաճախ խափանվում է սանհանգույցների աշխատանքը, կեղտաջրերը արտահոսում են՝ բնակչության շրջանում անհարմարավետություն ստեղծելով և խախտելով համայնքի սանիտարահիգիենիկ վիճակը: Նախատեսվում է վերանորոգել 1կմ երկարությամբ կոյուղագծերը, կառուցել կեղտահոր, ինչը կապահովի դրանց անխափան շահագործումը:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն 3

«Համայնքի փողոցների բարեկարգում »
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի կառուցապատում, բարեկարգում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Համայնքի հասարակական տրանսպորտի անխափան երթևեկության կազմակերպում, համայնքային ճանապարհների պահպանություն և շահագործում:</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա չէ</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Խճապատված ներհամայնքային ճանապարհներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ կմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>1</td><td>1</td><td>1</td><td>1</td><td>1</td></tr>
<tr><td colspan="7">2.Ներհամայնքային ասֆալտապատ ճանապարհներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա չէ</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Խճապատված ներհամայնքային ճանապարհներ
1.2. Ներհամայնքային ասֆալտապատ ճանապարհներ

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1. Մասնակի ասֆալտապատել համայնքի գլխավոր ճանապարհը
2.2.Անխափան երթևեկություն</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝1.000.000
Կապիտալ ծախսեր՝9.000.000
Ընդհանուր բյուջեն՝ 10.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Դոնոր կազմակերպությունների բացահայտում, սեփական եկամուտների հավաքագրում:</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Անբարենպաստ բնակլիմայական պայմաններ, ֆինանսական միջոցների բացակայություն:</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Երկարամյա շահագործման արդյունքում ներհամայնքային ճանապարհները ջրի և ձնհալի պատճառով ամբողջովին քանդվել են : Սելաֆաջրերը առաջացնելով փոսորակներ լցվում են անձրևաջրերով և անանցանելի են դարձնում ճանապարհները: Նախատեսվում է հիմնական խճապատման և ասֆալտապատման միջոցով բարեկարգել մայրուղուց բնակավայր մտնող ճանապարհը և համայնքային փողոցները: Նախատեսվում է մասնակի ասֆալտապատել համայնքը մայրուղուն կապող 1կմ երկարությամբ ճանապարհի ամենակարևոր հատվածները., ասֆալտապատումից հետո կբարելավվի երթևեկությունը նշված ճանապարհահատվածներում,կավելանա ժամանակակից ավտոմեքենաների մուտքը համայնք:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն 4

« Գերեզմանների պարսպապատման աշխատանքների ավարտ »
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Համայնքի կառուցապատում, բարեկարգում**						
Ծրագրի անմիջական նպատակ	Գերեզմանների պահպանում և անվտանգություն						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ		Առկա է	Առկա է	Առկա է	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Գերեզմանների անվտանգության ապահովում						
	Ցուցանիշներ մ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
				400	400	200	
	2. Գերեզմանատների մաքրության ապահովում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ		Առկա է	Առկա է	Առկա է	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Գերեզմանների անվտանգության ապահովում 1.2. Գերեզմանատների մաքրության ապահովում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Գերեզմանների պահպանում և անվտանգություն 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝500.000 Կապիտալ ծախսեր՝2.500.000 Ընդհանուր բյուջեն՝ 3.000.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոր կազմակերպությունների բացահայտում, սեփական եկամուտների հավաքագրում:						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անբարենպաստ բնակլիմայական պայմաններ, ֆինանսական միջոցների բացակայություն:						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ, համայնքի նախկին բնակիչ հանդիսացող քաղաքացիներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2020						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է ավարտին հասցնել գերեզմանների պարսպապատման աշխատանքները՝ գերեզմանները աղբից, հրդեհներից, գողությունից ապահովելու համար:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 5

«Ոռոգման ցանցի վերակառուցում »
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Համայնքի կառուցապատում, բարեկարգում**						
Ծրագրի անմիջական նպատակ	Ոռոգման ցանցի բնականոն շահագործում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ			Առկա է	Առկա է	Առկա է
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
					1	1	1
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ			Առկա է	Առկա է	Առկա է
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝2.000.000 Կապիտալ ծախսեր՝28.000.000 Ընդհանուր բյուջեն՝ 30.000.0000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոր կազմակերպությունների բացահայտում, սեփական եկամուտների հավաքագրում:						
Ծրագրի հիմնական ռիսկերը	ֆինանսական միջոցների բացակայություն:						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ, համայնքի նախկին բնակիչ հանդիսացող քաղաքացիներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2021						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի մոտ 50 հա հողատարածքի ոռոգելի դառնալը, բերքատվության ավելանալը						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 6

« Գիշերային լուսավորության աշխատանքների ավարտ »
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակիչների կյանքի բարելավում և հարմարավետության ապահովում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ	Առկա է	Առկա է	Առկա է		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Փողոցների լուսավորության և անվտանգության ապահովում						
	Ցուցանիշներ մ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200	200	200		
	2. Փողոցները գիշերային ժամերին երթևեկելի դառնալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ	Առկա է	Առկա է	Առկա է		
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Փողոցների լուսավորության և անվտանգության ապահովում 1.2. Փողոցները գիշերային ժամերին երթևեկելի դառնալը 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.Համայնքի փողոցներում գիշերային լուսավորության ապահովում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝500.000 Կապիտալ ծախսեր՝2.500.000 Ընդհանուր բյուջեն՝ 3.000.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոր կազմակերպությունների բացահայտում, սեփական եկամուտների հավաքագրում:						
Ծրագրի հիմնական ռիսկերը	ֆինանսական միջոցների բացակայություն:						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ, հյուրեր						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի բնակիչների կյանքի բարելավում և հարմարավետության ապահովում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՆ

« Համայնքը սպասարկող երթուղայինի առկայություն »
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Համայնքի բնակչության կյանքի որակի բարձրացում և մայրաքաղաքի հետ կապի խթանում**						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ		Առկա է			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքը սպասարկող երթուղային մեքենայի գնում						
	Ցուցանիշներ հատ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
				1			
	2. Երթուղայինի համար վարորդի աշխատանքի ընդունելության կազմակերպում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ		Առկա է			
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Համայնքը սպասարկող երթուղային մեքենայի գնում 1.2. Երթուղայինի համար վարորդի աշխատանքի ընդունելության կազմակերպում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Երթուղայինի անխափան աշխատանքի ապահովում 2.2.Համայնքի բնակչության՝ մայրաքաղաքի հետ կապի խթանում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝500.000 Կապիտալ ծախսեր՝3.500.000 Ընդհանուր բյուջեն՝ 4.000.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոր կազմակերպությունների բացահայտում, սեփական եկամուտների հավաքագրում:						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ, հովեկներ, հյուրեր						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018						
Ծրագրի համառոտ նկարագրություն	**Քանի որ համայնքը ոչ մի երթուղային չի սպասարկում, համայնքի բնակչությունը, ուսանողները անհարմարություն են ունենում մայրաքաղաք հասնելու համար, ուստի երթուղայինի շահագործումը կբարձրացնի համայնքի բնակչության կյանքի որակը և կխթանի մայրաքաղաքի հետ կապը:**						